ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, (այսուհետև՝ վարչություն) ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության, ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումների ու կարգադրությունների պահանջներով, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության՝ 2017 և 2018 թվականների աշխատանքային ծրագրին համապատասխան՝ 2017-2018 ուսումնական տարում, կազմակերպելով մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը, իր աշխատանքները նպատակաուղղել է՝ ապահովելու մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը, կրթության որակի բարձրացումը, կրթություն ստանալու հավասար մատչելիությունը և համակարգի արդյունավետ գործունեությունը: Վարչությունն իր աշխատանքային գործունեության ընթացքում համագործակցել է նաև մարզում գործող հանրապետական և համայնքային ենթակայության կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների հետ կամ առնչվել է ընդհանուր թվով՝ 363 կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզում գործել է մարզային ենթակայության 89 միջնակարգ, 26 հիմնական, 2 տարրական, 1 հատուկ դպրոց, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության՝ 1 կրթահամալիր, 6 ավագ դպրոց և 1 հիմնադրամ /Ծաղկունքի բաց դպրոց/:

2017-2018 ուստարվա սկզբում մարզային ենթակայության դպրոցներում փաստացի կոմպլեկտավորվել է 1438 դասարան՝ 26957 աշակերտով, Գավառի N 1 հատուկ դպրոցում՝ 6 դասարան՝ 40 աշակերտով, Սևանի N3 հիմնական դպրոցում՝ ռուսերեն ուսուցմամբ 4 դասարան՝ 28 աշակերտով, ՀՀ ԿԳՆ ենթակայության 1 կրթահամալիրում, 6 ավագ դպրոցում և Ծաղկունքի բաց դպրոցում սովորել է 1451 աշակերտ:

Այսպիսով՝ 2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ավարտին մարզում գործում է 125 հանրակրթական դպրոց՝ 28201 աշակերտով և 1 հատուկ դպրոց՝ 39 աշակերտով, այդ թվում՝

1. մարզային ենթակայության 117 դպրոց՝ 26753 աշակերտով.
2. ՀՀ ԿԳՆ ենթակայության 1 կրթահամալիր, 1 հիմնադրամ /<<Ծաղկունքի բաց դպրոց>>/ և 6 ավագ դպրոց՝ 1448 աշակերտով:

Ուսումնական տարվա ընթացքում մարզի դպրոցներ է ընդունվել 385 աշակերտ(որից 141-ը՝ այլ հանրապետություններից), իսկ տեղափոխվել կամ դպրոցը թողել է 590 աշակերտ (որից 306-ը՝ այլ հանրապետություններ):

Մարզի համայնքների ղեկավարների և իրավասու կազմակերպությունների հետ համագործակցված աշխատանքի արդյունքում ապահովվել է դպրոցահասակ երեխաների ընդգրկումն ուսումնական հաստատություններ և, ըստ դպրոցների տնօրենների ու համայնքների

ղեկավարների կողմից ներկայացված տեղեկատվության, մարզում չեն եղել հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դպրոց ընդգրկելուն, որի արդյունքում շուրջ 180 երեխա ապահովվել է հագուստով և գրենական պիտույքներով:

❖ **2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի վերջում մարզային երթակայության հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը 26753 է**, /կամ աշակերտների թիվը պակասել է 75- ով/, որից գնահատվել է 23853-ը:

2877 առաջին դասարանցի, գործող կարգի համաձայն, չի գնահատվել, սակայն համապատասխան դպրոցների մանկավարժական խորհուրդների որոշմամբ և ծնողների համաձայնությամբ 18 աշակերտ մնացել է դասընթացը կրկնելու:

Չի գնահատվել նաև դպրոցների 2-12-րդ դասարանների 22 աշակերտ, որոնք նույնպես մնացել են դասընթացը կրկնելու (0,2%):

Այսպիսով, անկախ քննությունների արդյունքներից, 1-12-րդ դասարաններում դասընթացը կրկնելու է մնացել 40 աշակերտ (0.14%), իսկ 2-12-րդ դասարաններում՝ ամառային առաջադրանք է ստացել՝ 43-ը (0.18%):

Գերազանցիկ է՝ 5835-ը (24.4%), հարվածային է՝ 6695-ը (28%), միջակ առաջադիմություն ունի՝ 11251-ը (47.1%), իսկ 72-ը՝ (0.3%) ունի անբավարար գնահատական:

2017-2018 ուստարվա ավարտին 12-րդ դասարանում սովորել է 625 աշակերտ, որից գնահատվել է 622 աշակերտ, չի գնահատվել 3 աշակերտ՝ 200 ժամ և ավելի բացակայություն ունենալու պատճառով:

Պետական ավարտական քննությունների /այդ թվում ս/թ հուլիսի 2-8-ը անցկացված վերաքննությունների/ արդյունքում՝ 12-րդ դասարան է ավարտել և միջնակարգ կրթության ատեստատ է ստացել 622 աշակերտ, որից 3-ը՝ դրսեկ: 12-րդ դասարանի 1 աշակերտ պարգևատրվել է <<Գերազանցության մեդալով>> /Ծաղիկ Տոնեյանը՝ Զոլաքարի N 1 միջնակարգ դպրոցից/:

9-րդ դասարանում 2017-2018 ուստարվա ավարտին սովորել է 2429 աշակերտ, սակայն գնահատվել է 2428 աշակերտ, չի գնահատվել 1 աշակերտ՝ 200 ժամ և ավելի բացակայություն ունենալու պատճառով:

Ավարտական քննություններին /այդ թվում՝ ս/թ հուլիսի 2-8-ը վերաքննություններին/ մասնակցել և դրական է ստացել 2405 աշակերտ: 3 աշակերտ չի մասնակցել բոլոր 7 առարկաներից քննություններին:

Ավարտական քննություններին չի մասնակցել, սակայն հիմնական կրթության վկայական է ստացել Գավառի N 1 հիմնական դպրոցի ներառական կրթությամբ՝ 1, Գավառի N 1 հատուկ դպրոցի՝ 5, Մարտունու N 2 հիմնական դպրոցի ներառական կրթությամբ՝ 1 և Կարմիրգյուղի N 2 հիմնական դպրոցի ներառական կրթությամբ՝ 4 աշակերտ:

Գերազանց առաջադիմությամբ ավարտած 9-րդ դասարանի 188 աշակերտի տրվել է գերազանցության նմուշի վկայական, իսկ 2223-ին՝ սովորական նմուշի վկայական:

4-րդ դասարանում ուսումնական տարվա ավարտին սովորել է 2740 աշակերտ, որից փոխադրական քննություններին թույլատրվել է մասնակցել 2737-ին, փոխադրական քննություններին մասնակցել է 2717 աշակերտ և ստացել է դրական գնահատականներ:

Մարզի դպրոցների 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի՝ ըստ տարածքների աշակերտների շարժը և առաջադիմությունը հետևյալն է՝

Հ/Հ	Տարածքի անվանումը	աշ.թիվը 2-րդ կիս.սկզբում	Դպրոց են ընդունվել կիսամյակի ընթացքում		Դպրոցը թողել են կիսամյակի ընթացքում		աշ.թիվը 2-րդ կիս. վերջում	Գնահատվել են	չեն գնահատվել	գերազանցիկ	հարվածային	միջակ	անբավարար գնահատական ունեն /աշ./		առաջադիմություն %	որակ %
			ընդամենը	այդ թվում արտերկրից	ընդամենը	այդ թվում արտերկիր							ընդամենը	այդ թվում 3 և ավելի առարկաներից		
1	***Գավառ***	5872	30	6	59	38	5843	5226	617	1508	1481	2226	11	2	99,7	57.19
2	***Սևան***	4319	18	5	26	13	4311	3872	439	1155	1293	1421	3	1	99.9	63.22
3	***Մարտունի***	10330	55	33	74	48	10311	9168	1143	2172	2357	4631	8	3	99.9	49.4
4	***Վարդենիս***	4633	38	7	46	15	4626	4110	515	800	1197	2088	25	6	99.4	48.59
5	***Ճամբարակ***	1674	15	4	27	4	1662	1477	185	200	367	885	25	0	98.3	38.38
Ընդամենը մարզում		***26828***	***156***	***55***	***232***	***118***	***26753***	***23853***	***2899***	***5835***	***6695***	***11251***	***72***	***12***	***99.69***	***52.53***

Մարզի դպրոցների աշակերտների միջին առաջադիմությունը կազմում է 99.69 %, որակը՝ 52.53%:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր առաջադիմություն ունեն Ճամբարակի (98,3%) և Վարդենիսի(99,4%) տարածաշրջանների դպրոցները, իսկ ցածր որակ՝ Ճամբարակի (38,38%), Վարդենիսի (48,59%) և Մարտունու (49,4%) տարածաշրջանների դպրոցները:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր են Ծովազարդի (96,6%), Կուտականի (94,12%), Ակունքի (96,76%), Ծովասարի (98,6%), Ճամբարակի N 4 (97%), Թթուջրի (89,9%), Դդմաշենի միջնակարգ (99%), Վարդենիկի N 1 հիմնական (98,5%) և մի շարք այլ դպրոցներ:

Մարզի միջին որակից ցածր են Գավառի N8 (35,7%), Կութի (33,33%), Շատվանի (26,5%), Կախակնի (25%), Գեղհովիտի N 2 (35,73%), Աղբերքի (21%), Արտանիշի (30,4%), Գագարինի (33,49%), Դդմաշեն գյուղի միջնակարգ (37,9%) և մի շարք այլ դպրոցներ:

Մարզի միջին առաջադիմությունից և միջին որակից բարձր են Ծաղկաշենի (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 82%), Սարուխանի N 1 (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 74%), Ծափաթաղի (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 85,71%), Կալավանի (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 87%), Գետիկի միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 53%), Գեղաքարի (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 100%), Լեռնահովիտի (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 78,37%), Սևանի N 3 (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 75%), Սևանի N 1 (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 75%), Նորաշենի հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 78%), Ծովինարի տարրական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 80,4%) և մի շարք այլ դպրոցներ:

❖ Կիսամյակի սկզբում Գավառի N 1 հատուկ դպրոցի 6 դասարանում սովորել է 40 աշակերտ, կիսամյակի վերջում ՝ 39-ը:

Դպրոցի աշակերտների առաջադիմությունը կազմում է 100%:

2-րդ կիսամյակի ավարտին ներառական կրթությամբ սովարողների թիվը եղել է 122, այդ թվում՝ 17-ը սովորել է Գավառի N 1 հիմնական դպրոցում, 19-ը՝ Ճամբարակի N 1 հիմնական դպրոցում, 4-ը՝ Վարդենիսի N 2 հիմնական դպրոցում, 26-ը՝ Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցում, 51-ը՝ Մարտունու N 2 հիմնական դպրոցում և 5-ը՝ Սևանի N 3 հիմնական դպրոցում:

. Կիսամյակի սկզբում մարզում գործող ԿԳՆ ենթակայությամբ 8 դպրոցում, այդ թվում՝ 6 ավագ դպրոցի, 1 կրթահամալիրի և 1 հիմնադրամի տնօրենների կողմից ներկայացրած՝ 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի աշակերտների շարժի և առաջադիմության տեղեկագրերի համաձայն՝ սովորել է 1458 աշակերտ, կիսամյակի վերջում՝ 1448 աշակերտ:

Հանրակրթական դպրոցների տնօրենների կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ ներկայացված և <<Մայլբրի>> համակարգով մեր տնօրինությանն ուղարկված գրությունների հիման վրա մեր կողմից կազմվեց տեղեկանք՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողների քննությունների անցկացման ժամանակացույցի վերաբերյալ>>, ըստ որի, 120-200 ժամ բացակայություն ունի ընդամենը 23 աշակերտ՝ 15 դպրոցից:

❖ **Մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների կողմից ներկայացված 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի շարժի և առաջադիմության տեղեկագրերի համաձայն՝** կիսամյակի սկզբում դպրոցների 1438 դասարանում սովորել է 26956 աշակերտ, մինչդեռ, իրականում և ըստ դպրոցների տնօրենների կողմից ներկայացրած 2017-2018 ուստարվա աշակերտների 1-ին կիսամյակի շարժի տեղեկագրերի՝ մարզային ենթակայության դպրոցների 1438 դասարանում սովորել է 26957 աշակերտ:

Տարբերությունն առաջացել է՝

1) Գանձակ գյուղի N2 միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանի աշակերտների թիվը. 18-ի փոխարեն ներկայացվել է 19-ը, որի վերաբերյալ մարզպետարան է ներկայացվել պարզաբանում՝ 07.09.2017թ. N 22 Ա գրությամբ (մտից՝ N 89-95-1, 08.09.2017թ.).

2) Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի 1-ին դասարանի աշակերտների թիվը 20-ի փոխարեն ներկայացվել է 18-ը, որի վերաբերյալ մարզպետարան է ներկայացվել պարզաբանում՝ 14.09.2017թ. գրությամբ (մտից՝ N 9271-17, 15.09.2017թ.).

3) Լիճք գյուղի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտների թիվը 69-ի փոխարեն ներկայացվել է 68-ը, որի վերաբերյալ մարզպետարան է ներկայացվել պարզաբանում՝ 11.09.2017թ. N034-094 գրությամբ (մտից՝ N 9031-17, 11.09.2017թ.).

4) Ակունք գյուղի միջնակարգ դպրոցում 5-րդ դասարանի աշակերտների թիվը 25-ի փոխարեն ներկայացվել է 26-ը, 7-րդ դասարանի աշակերտների թիվը 36-ի փոխարեն ներկայացվել է 37-ը, 12-րդ դասարանի աշակերտների թիվը 14-ի փոխարեն ներկայացվել է 13-ը.

5) Գեղամասար գյուղի միջնակարգ դպրոցի 1-ին դասարանի աշակերտների թիվը 33-ի փոխարեն ներկայացվել է 34-ը, 2-րդ դասարանի աշակերտների թիվը 21-ի փոխարեն ներկայացվել է 20-ը:

Փաստացի 26957 աշակերտից 123-ը ներառական կրթությամբ աշակերտ է, որից 17-ը սովորել է Գավառի N 1 հիմնական դպրոցում, 19-ը՝ Ճամբարակի N 1 հիմնական դպրոցում, 3-ը՝ Վարդենիսի N2 հիմնական դպրոցում, 51-ը՝ Մարտունու N2 հիմնական դպրոցում, 5-ը՝ Սևանի N3 հիմնական դպրոցում և 28-ը՝ Կարմիրգյուղի N2 հիմնական դպրոցում:

Կիսամյակի ընթացքում մարզի դպրոցներ է ընդունվել 229 աշակերտ, այդ թվում՝ արտերկրից՝ 86 աշակերտ, հանրապետության այլ մարզերի դպրոցներից՝ 36 աշակերտ, այլ ուսումնական հաստատություններից՝ 12 աշակերտ, դպրոցից մաղված կամ սպասարկման տարածքից՝ 16-ը, մարզի դպրոցներից՝ 79 աշակերտ:

Կիսամյակի ընթացքում մարզի դպրոցներից տեղափոխվել և դպրոցները թողել է 358 աշակերտ, այդ թվում՝ արտերկիր՝ 188-ը, հանարապետության այլ մարզերի դպրոցներ՝ 80-ը, այլ ուսումնական հաստատություններ՝ 1-ը, դպրոցը թողել է 13-ը՝ հարգելի պատճառով, մարզի այլ դպրոցներ՝ 76 աշակերտ:

Կիսամյակի ամփոփումից պարզվել է, որ կիսամյակի վերջում աշակերտների թիվը 26828 է /կամ աշակերտների թիվը պակասել է 129 - ով/, որից գնահատվել է 23915-ը:

2891 առաջին դասարանցի, գործող կարգի համաձայն, չի գնահատվել:

Չի գնահատվել նաև դպրոցների 2-12-րդ դասարանների 22 աշակերտ:

Գերազանցիկ է 3904-ը (16,3%), հարվածային՝ 7474-ը (31,25%), միջակ առաջադիմություն ունի՝ 12104-ը (50,6%), իսկ 433-ը՝ (1.8%) ունի անբավարար գնահատական, որից 51-ը՝ 3 և ավելի առարկաններից:

Մարզի դպրոցների 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի՝ ըստ տարածքների աշակերտների շարժը և առաջադիմությունը հետևյալն է՝

Հ/Հ	Տարածքի անվանումը	աշ.թիվը 1-ին կիս.սկզբում	Դպրոց են ընդունվել կիսամյակի ընթացքում		Դպրոցը թողել են կիսամյակի ընթացքում		աշ.թիվը կիս. վերջում	Գնահատվել են	չեն գնահատվել	գերազանցիկ	հարվածային	միջակ	անբավարար գնահատական ունեն /աշ./		առաջադիմություն %	որակ %
			ընդամենը	այդ թվում արտերկրից	ընդամենը	այդ թվում արտերկիր							ընդամենը	այդ թվում 3 և ավելի		
1	Գավառ	5898	37	15	63	32	5872	5253	619	1098	1685	2401	69	7	98.6	52.4
2	Մարտունի	10380	78	40	128	83	10330	9175	1155	1430	2621	4972	152	19	98.8	44.15
3	Սևան	4337	45	20	63	39	4319	3878	441	678	1525	1648	27	3	99	57
4	Վարդենիս	4660	55	6	82	26	4633	4122	511	554	1254	2198	116	9	97.18	43.9
5	Ճամբարակ	1682	14	5	22	8	1674	1487	187	144	389	885	69	13	95,3	35.8
Ընդամենը մարզում		26958	229	86	357	188	26828	23915	2913	3904	7474	12104	433	51	98.18	47,58

Մարզի դպրոցների աշակերտների միջին առաջադիմությունը կազմում է 98.18%, որակը՝ 47,58%:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր առաջադիմություն ունեն Ճամբարակի (95,3%) և Վարդենիսի (97.18%) տարածաշրջանի դպրոցները, իսկ ցածր որակ՝ Ճամբարակի (35.8%), Վարդենիսի (43.9%) և Մարտունու (44.15%) տարածաշրջանների դպրոցները:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր են Սարուխանի N 2 (97%), Ակունքի (84,64 %), Շատվանի (94%), Ծովասարի (88.9%), Ն. Գետաշենի N2 (95.66%), Վահանի (91.3%), Դդմաշենի միջնակարգ (93.3%), Ճամբարակի N 1 (94.2%), Գավառի N 1 հիմնական (97,3%) դպրոցները:

Մարզի միջին որակից ցածր են Գեղարքունիքի (41%), Սարուխանի N2 /43%/, Կութի (33.3/%), Սոթքի (26.9%), Վաղաշենի (35%), Մարտունու (31%), Աղբերքի (21%), Արտանիշի (25%), Դդմաշենի (34.2%), Գագարինի միջնակարգ (29,8%) և Վարդենիկի N 2 հիմնական (37.9%) դպրոցները:

Մարզի միջին առաջադիմությունից և միջին որակից բարձր են Կարմիրգյուղի N 2 (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 63%), Ծափաթաղի (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 78,57%), Կալավանի միջնակարագ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 93%), Սևանի N1 (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 67%) Գավառի N 4 (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 55.4%), Գավառի N3 (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 55,17%), Լիճքի (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 65,8%), Ազատի հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 60%), Ծովինարի տարրական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 73,3%) և մի շարք այլ դպրոցներ:

Կիսամյակի սկզբում և կիսամյակի վերջում Գավառի N 1 հատուկ դպրոցի 6 դասարանում սովորել է 40 աշակերտ: Դպրոցի աշակերտների առաջադիմությունը կազմում է 100%, իսկ որակը՝ 0%:

Կիսամյակի սկզբում մարզում գործող 6 ավագ դպրոցների, 1 կրթահամալիրի և <<Ծաղկունքի բաց դպրոց>> հիմնադրամի տնօրենների կողմից ներկայացրած՝ 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի աշակերտների շարժի և առաջադիմության տեղեկագրերի համաձայն՝ սովորել է 1449 աշակերտ:

Կիսամյակի վերջում ավագ դպրոցներում, <<Ծաղկունքի բաց դպրոց>> հիմնադրամում և կրթահամալիրում սովորել է 1457 աշակերտ:

Այսպիսով՝ 2017-2018 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտին մարզում գործող 125 հանրակրթական դպրոցում սովորել է 28285 աշակերտ, այդ թվում՝

1. մարզային ենթակայության 117 դպրոց՝ 26828 աշակերտ.
2. ՀՀ ԿԳՆ ենթակայության 1 կրթահամալիր, 1 հիմնադրամ /<<Ծաղկունքի բաց դպրոց>>/ և 6 ավագ դպրոց՝ 1457 աշակերտ:

- **Աշխատողներ՝**

Մարզային ենթակայության 117 հանրակրթական դպրոցների և մեկ հատուկ դպրոցի դրույքների թիվը կազմում է 3736, **աշխատողների թիվը՝ 4424, աշխատողների թիվը 688-ով ավել է դրույքների թվից**:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրույքների թիվը պակասել է 228.8-ով, աշխատողների թիվը՝ 142-ով: Աշխատողների ընդհանուր թվի 8 %-ը /357 մարդ/ 65 և բարձր տարիքի է:

Մարզային ենթակայության 117 հանրակրթական դպրոցների և մեկ հատուկ դպրոցի՝

- Վարչական դրույքների թիվը կազմում է 242.8, աշխատողների թիվը՝ 253.
- Մանկավարժական դրույքների թիվը՝ 2438.95, աշխատողների թիվը՝ 2943.
- Ուսումնաօժանդակ աշխատողների դրույքների թիվը՝ 994, աշխատողների թիվը՝ 1157.
- Նախադպրոցական կրթություն իրականացնող դպրոցներում դաստիարակների դրույքների թիվը կազմում է 60.25, աշխատողների թիվը՝ 71:

Մարզի 117 հանրակրթական դպրոցներում փաստացի ուսուցչական գործունեություն ծավալող անձանց թիվը կազմում է 2910 /կամ աշխատողների ընդհանուր թվի 66.65%/, որից՝ 2349 կին /կամ ուսուցիչների ընդհանուր թվի 80.7 %-ը/ և 561 տղամարդ /19.3%/: Բարձրագույն կրթություն չունեցող մանկավարժների թիվը կազմում է 377 /12.95%/: Ուսուցիչներից երթևեկում է 629-ը, իսկ աշակերտներից՝ 175-ը:

Ատեստավորման միջոցով որակավորման 1-ին աստիճանի տարակարգ է ստացել մարզային ենթակայության 117 հանրակրթական դպրոցների 87 ուսուցիչ:

Անհրաժեշտ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ են կատարվել ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումներին աջակցելու հարցում: Կազմվել և ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին է տրամադրվել վերապատրաստվող ուսուցիչների անվանացանկը, վերապատրաստումների ժամանակացույցի մասին իրազեկվել է բոլոր հանրակրթական դպրոցներին: 2017 թվականին վերապատրաստվել և ատեստավորվել է 524 ուսուցիչ, իսկ 2018 թվականին ատեստավորվելու է 566 ուսուցիչ:

ՀՀ կառավարության՝ 25.09.2003թ. N1412-Ն որոշմամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի հեռավոր սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի հանրակրթական դպրոցներ է գործուղվել 22 ուսուցիչ:

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում որոշակի աշխատանք է տարվել դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ: Առաջացած մանկավարժական թափուր տեղերը համալրվել են մրցույթային կարգով և 34 դպրոցում անցկացված մրցույթների (այդ թվում՝ կրկնակի և բազմակի մրցույթներ) արդյունքում նշանակվել է 54 ուսուցիչ, այնուհանդերձ, ներկայումս 53 հանրակրթական դպրոցում առկա է 74 մանկավարժական աշխատողի պահանջ, որից՝ 61 ուսուցչի թափուր տեղ:

Միջին մանկավարժական դրույքաչափը 2018 թվականին կազմում է 104 հազար ՀՀ դրամ

Միջին մանկավարժական աշխատավարձը 2018 թվականին կազմում է 127,4 հազար ՀՀ դրամ

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը 2018 թվականին կազմում է 15,5 դասաժամ:

- **<<Դասավանդի՛ր, Հայաստան>>** կրթական հիմնադրամի հետ համագործակցելով՝ նոր ուսումնական տարում, մարզ կգործուղվի ևս 3 ուսուցիչ, որոնք կդասավանդեն Սարուխանի N 3 /ֆրանսերեն/, Ծափաթաղի և Ջիլի միջնակարգ դպրոցներում /քիմիա, կենսաբանություն/:
- Մարզի նախկին վարչական 5 շրջանների մեկական դպրոցներում (Գավառի N4 հ/դ, Սևանի N3 հ/դ, Մարտունու N2 հ/դ, Վարդենիսի N4 հ/դ և Ճամբարակի N1 հ/դ) 2015-2016 ուսումնական տարվանից ներդրվել է **«Ազգային երգ ու պար» առարկան:**
- **Տարվա ընթացքում կազմակերպվել են <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>>, <<Հայաստանում ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ>>, մրցույթները,** և ապահովվել հաղթողների տվյալների ներկայացումը ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Մարզում 2017-2018 ուսումնական տարվա լավագույն ուսուցիչ է ճանաչվել Գավառի Ա. Իսահակյանի անվան N 4 հիմնական դպրոցի <<Մաթեմատիկա>> առարկայի ուսուցիչ Վարդուհի Խաչատրյանը, լավագույն տնօրեն՝ Գեղհովիտ գյուղի N 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Մանվել Սաֆարյանը, լավագույն դաստիարակ՝ Սևան քաղաքի թիվ 3 <<Հեքիաթ>> մանկապարտեզի

դաստիարակչուհի Լուսինե Մարտիրոսյանը, Հայաստանում ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչներ՝ Սևանի N1 հիմնական դպրոցից՝ Ռուզաննա Սարգսյանը և Վարդենիսի N3 հիմնական դպրոցից՝ Մայա Պետրոսյանը:

Չնայած պարբերաբար արված զգուշացումներին՝ բազմաթիվ դպրոցների և նախադպրոցական հաստատությունների տնօրենները հետևողական չեն. <<Տարվա լավագույն ուսուցիչ>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների պահանջները կատարելիս՝ բազմաթիվ հաստատություններում լիարժեք չի կազմակերպվում մրցույթների 1-ին փուլը, և 2-րդ փուլի մասնակցության թեկնածուները սակավաթիվ են լինում: Քիչ է նաև որակավորման 1-ին աստիճանի տարակարգ ստանալու համար դիմողների թիվը, եթե 2017 թվականին նրանց թիվը 21–ն էր, ապա 2018 թվականին՝ 6-ը:

❖ **Մարզի դպրոցներ կատարած ստուգայցեր**ի ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվել հաստատությունների տնօրենների կողմից իրավական ակտերի պահանջների կատարմանը և ՀՀ օրենդրությանը՝ դրանց համապատասխանությանը: Թերություններն ու խախտումները տարբեր են: Թերությունները կամ բացթողումները, որոնք հնարավոր են ուղղել, մեր ցուցումների համաձայն, տեղում շտկվում են, իսկ իրավական հետևանք առաջացնող խախտումների դեպքում՝ համապատասխան առաջարկություններ են ներկայացվում մարզպետին: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշումներով /06.06.2018թ. N 143-Ա՝ Հայաստանի Հանրապետության կրթությաև գիտության նախարարի՝ 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանով հաստատված կարգի պահանջի խախտման պատճառով անվավեր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան N 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի՝ 2018 թվականի մայիսի 15-ի N 6 որոշումը, իսկ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու համար կարգապահական տույժ են ստացել Կախակն գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Արտաշ Խլոյանը, Շատվան գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Ֆրունզիկ Գևորգյանը և Արծվանիստ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Թոռնիկ Սահակյանը:

❖ Կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաներն ու նորարարական մեթոդները՝ կրթության որակի բարձրացման, ծնող-դպրոց համագործակցության և կապի ամրապնդման նպատակով մարզի դպրոցներում ներդրված **<<Dasaran.am>>** կրթական ծրագրի աջակցությամբ հետևել ենք երեխայի՝ դպրոց հաճախելիության և առաջադիմության վերաբերյալ տեղեկատվությանը: **<<Dasaran.am>>** կրթական ծրագրի տնօրենի կողմից պարբերաբար մեզ է տրամադրվում տեղեկատվություն՝ դասամատյանների էլեկտրոնային մուտքագրման աշխատանքների վերաբերյալ: Վերջին՝ 30.05.2018 թվականին տրամադրված տեղեկատվության համաձայն՝ մուտքագրումները լիարժեք կատարած /100%/ դպրոցների ցանկում է 75 դպրոց, ոչ լիարժեք կատարողների /51-99%/ ցանկում՝ 42 դպրոց, թերի աշխատանքներ կատարողի /0-50%՝/ 1 դպրոց /Ծաղկունքի միջնակարգ դպրոց/:

❖ Մարզային ենթակայության 114 դպրոցում **բնագիտական** առարկաներից անցկացվել է 4787 տեսադաս:

❖ Մարզի 25 դպրոցում գործող **ինժեներական** լաբորատորիաների 50 խմբում հաճախում է 767 երեխա:

❖ Մարզային ենթակայության բոլոր 118 դպրոցում ստեղծվել են **կայքէջեր,** որտեղ յուրաքանչյուր եռամսյակի ավարտին տեղադրվում են նաև ֆինանսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դպրոցի ֆինանսական գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

❖ Մարզի 22 դպրոցում, 2017-2018 ուստարում, ներդրվել է **«Ձեռնարկատիրություն»** առարկայի փորձնական ծրագիր /10-րդ դասարանում՝ 409 աշակերտ, իսկ 11-րդ դասարանում՝ 72/:

❖ Համապատասխան աշխատանք է տարվել **ջեռուցման** ապահովման ուղղությամբ, որի արդյունքում հաստատությունները նախընտրած վառելիքով կազմակերպել են շենքերի ջեռուցումը. 70 դպրոց օգտագործել է գազ (անհատական կաթսայատան միջոցով), 7-ը՝ էլեկտրաէներգիա, 40-ը՝ հեղուկ վառելանյութ և 1-ը վառելափայտ:

❖ Հանրակրթական հաստատություններում սովորողների ուսուցման գործընթացի անխափան կազմակերպման համար նոր ուստարվա նախաշեմին հատուկ ուշադրություն է դարձվել **դպրոցական շենքերի պահպանմանը և տարածքների բարեկարգմանը**:

Մարզի 126 հանրակրթական դպրոցների շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրության արդյունքում թվով՝ 39 /մարզային ենթակայության՝ 36/ դպրոց սեյսմակայունության տեսակետից համարվում է առավել վտանգավոր:

2018 թվականին տարեվերջին ավարտվելու են Սևանի N 1 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ընթացքի մեջ են 2016-ից սկսած Զոլաքարի N 2 միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքները:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված են սկսել Ներքի Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքները (ներկայումս ընթանում է գնման գործընթացը):

Շուրջ 12 դպրոց նախատեսել է իր տնտեսված միջոցներով կատարել վերանորոգման աշխատանքներ:

Ներկայումս ընթացքի մեջ են նաև Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքները՝ Ասիական զարգացման բանկի միջոցով:

❖ **Հանրակրթական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացման գործում,** կարևորելով ոչ պետական միջոցների ներգրավումը, ապահովվել է մարզպետարանի աշխատակազմի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների, համայնքների ղեկավարների, դպրոցների և նախադպրոցական հաստատությունների տնօրենների համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց, բարեգործական կազմակերպությունների հետ, որի արդյունքում իրականացվել է շուրջ 60.3 միլիոն ՀՀ դրամի արտաբյուջետային միջոցների ներգրավում՝ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման ու գույքավորման աշխատանքներում. մասնավորապես, <<Վորլդ Վիժն>> կազմակերպության կողմից՝ Վարդենիսի N2 հիմնական(2,8 մլն ՀՀ դրամ), Լճավանի միջնակարգ (0,637մլն ՀՀ դրամ), Փոքր մասրիկի միջնակարգ (2,677 մլն. ՀՀ դրամ),

Մաքենիսի միջնակարգ (0,458 մլն ՀՀ դրամ), Ավազանի հիմնական (0,23 մլն. ՀՀ դրամ), Սոթքի միջնակարգ (0.3 մլն. ՀՀ դրամ), Տրետուքի միջնակարգ (0.410 մլն ՀՀ դրամ), Վարդենիսի N4 հիմնական(2,572 մլն ՀՀ դրամ) և մի շարք այլ ուսումնական, կրթական և մշակութային ծրագրերի կազմակերպման և իրականացման համար մի շարք այլ կազմակերպության կողմից բազմաթիվ բարեգործություններ ու նվիրատվություններ:

Հասարակական կազմակերպությունների հետ հանրակրթության, այդ թվում՝ նախադպրոցական կրթության զարգացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ ներդրումները՝ Վ. Գետաշենի N1 և N2 միջնակարգ (1.09 մլն ՀՀ դրամ՝ <<Հայ դպրոց>> հիմնադրամ), Լանջաղբյուրի միջնակարգ (1.46 մլն ՀՀ դրամ՝ <<Հայ դպրոց>> հիմնադրամ), մի շարք այլ բարեգործություններ ու նվիրատվություններ: Ֆիզիկական, իրավաբանական անձանց, բարեգործական կազմակերպությունների հետ հանրակրթության, այդ թվում՝

Նախադպրոցական կրթության զարգացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ ներդրումները՝

Ծակքարի միջնակարգ (6.608 մլն ՀՀ դրամ՝ դպրոցի միջոցներով, Գավառի N2 միջնակարգ (0.07 մլն ՀՀ դրամ՝ <<Ջինիշյան>> հիմնադրամ), Ծովինարի տարրական (1.0 մլն. ՀՀ դրամ՝ <<Արփա Սևան>> ՓԲԸ), Ն. Գետաշենի N2 միջնակարգ (2.8 մլն ՀՀ դրամ՝ բարեգործ՝ Հովհաննիսյան Հակոբ), Գանձակի N2 միջնակարգ (1.2 մլն ՀՀ դրամ՝ բարեգործ՝ Արարատ Ղազարյան) և մի շարք այլ բարեգործություններ ու նվիրատվություններ:

❖ Աշխատանք է տարվել մարզի դպրոցները 2017-2018 ուսումնական տարվա համար **նախատեսված դասագրքերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով ապահովելու ուղղությամբ**: ՀՀ ԿԳՆ և համապատասխան հրատարակչությունների միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ մարզկենտրոն են ներկրվել և, ըստ ներկայացրած հայտերի, դպրոցներին են բաշխվել 2017-2018 ուստարվա 1-12-րդ դասարանների 62 անուն 88845 կտոր դասագիրք, ուսուցիչների ձեռնարկներ, ուսումնաօժանդակ գրականություն (տեղեկագրեր, պաստառներ, քարտեզներ, մանկավարժական պարբերականներ): Գանձումների և մուծումների աշխատանքները կատարվել են 100%:

2018-2019 ուստարվա համար մարզկենտրոն է ներկրվել և, ըստ ներկայացրած հայտերի, դպրոցներին են բաշխվել 1-12-րդ դասարանների 72 անուն 74597 կտոր դասագիրք, ուսուցիչների ձեռնարկներ, ուսումնաօժանդակ գրականություն (տեղեկագրեր, պաստառներ, քարտեզներ, մանկավարժական պարբերականներ:

❖ Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպված տարաբնույթ միջոցառումները նպատակաուղղվել են ոչ միայն սովորողների կրթության որակի ապահովմանը, այլև **դաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը**:

Այսպես՝

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշումների համաձայն՝ կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ **դպրոցականների առարկայական օլիմպիադաների ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը:**

ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցականների՝ 2017-2018 ուստարվա օլիմպիադաների դպրոցական, տարածքային և մարզային փուլերը կազմակերպվել և անցկացվել են՝ ըստ նախատեսված ժամանակացույցերի: Մարզի 125 հանրակրթական դպրոցներից 122 դպրոցների

7503 աշակերտ 2017թ. դեկտեմբեր ամսից մինչև 2018 թվականի փետրվար ամիսը մասնակցել է ներդպրոցական փուլին, որից յոթ առարկայի գծով՝ առցանց/օնլայն եղանակով/, այդ թվում՝ Գավառի տարածաշրջանից՝ 1102 աշակերտ, Մարտունու տարածաշրջանից՝ 1318 աշակերտ, Սևանի տարածաշրջանից՝ 521 աշակերտ, Վարդենիսի տարածաշրջանից՝ 870 աշակերտ և Ճամբարակի տարածաշրջանից՝ 736 աշակերտ:

Ներդպրոցական փուլում մասնակից չեն ունեցել Գեղաքարի հիմնական, Ծովինարի և Մեծ Մասրիկի տարրական դպրոցները:

Ներդպրոցական փուլի արդյունքներով 9 առարկայից տարածքային փուլին մասնակցության է երաշխավորվել 2560 աշակերտ, այդ թվում՝ Գավառի տարածքից 592 մասնակից, Մարտունու տարածքից՝ 785 մասնակից, Սևանի տարածքից՝ 484 մասնակից, Վարդենիսի տարածքից՝ 393 մասնակից, Ճամբարակի տարածքից՝ 306 մասնակից: 2011 թվականի ապրիլի 5-ի N280-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգի>> համաձայն՝ <<Մաթեմատիկա>>, <<Աստղագիտություն>>, <<Ինֆորմատիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Ֆիզիկա>>, <<Աշխարհագրություն>> առարկաներից օլիմպիադաներն առցանց եղանակով կազմակերպել է մարզի 111 դպրոց, որոնցից առաջին փուլի մասնակցության հայտ է ներկայացրել 4749 աշակերտ, մասնավորապես, մաթեմատիկայից՝ 2227, քիմիայից՝ 451, աստղագիտությունից՝ 10, կենսաբանությունից՝ 653, ինֆորմատիկայից՝ 202, ֆիզիկայից՝ 550, աշխարհագրությունից՝ 656:

Մարզային փուլին մասնակցելու երաշխավորվել է 592 աշակերտ: Սակավաթիվ հայտ է ներկայացվել <<Ֆրանսերեն>> առարկայից, իսկ <<Աստղագիտություն>> առարկայից հայտ չի ներկայացվել:

Տարածքային փուլն անցկացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի՝ 2018թ. հունվարի 30-ի N 25-Ա որոշման համաձայն՝ ս/թ փետրվարի 1-19-ը ընկած ժամանակահատվածում, նախկին վարչական կենտրոններում: Այս փուլին երաշխավորված 2560 աշակերտից փաստացի մասնակցել է 2445-ը (կամ երաշխավորվածների 95.50%-ը) այդ թվում՝ Գավառից՝ 692-ը, Մարտունուց՝ 701-ը, Սևանից՝ 333-ը, Վարդենիսից՝ 485-ը, Ճամբարակից՝ 234-ը:

Տարածքային փուլին ակտիվ մասնակցել են Վարդենիսի, Ճամբարակի ավագ, Գանձակի N 1, Նորատուսի N 1, Ն. Գետաշենի N 1, Գեղհովիտի N 2, Ակունքի, Լճաշենի, Վահանի միջնակարգ, Մարտունու N 1 և Սևանի N 3 հիմնական դպրոցները:

Տարածքային փուլին մասնակցած 2445 աշակերտից մարզային փուլին երաշխավորվել է մասնակցել 592-ը, այդ թվում Գավառից՝ 203-ը, Մարտունուց՝ 127-ը, Սևանից՝ 102-ը, Վարդենիսից՝ 93-ը և Ճամբարակից՝ 67-ը:

Մարզային փուլը կազմակերպվել և անցկացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի՝ 2018 թվականի փետրվարի 8-ի N34-Ա որոշման պահանջների կատարմամբ:

Մարզային փուլին 16 առարկայից մասնակցեց 482 աշակերտ, այդ թվում՝ Գավառից՝ 158-ը, Մարտունուց՝ 103-ը, Սևանից՝ 85-ը, Վարդենիսից՝ 82-ը, Ճամբարակից՝ 54-ը:

Մարզային փուլին սակավ մասնակցության հայտեր են ներկայացրել և մասնակցություն են ցուցաբերել <<Ֆրանսերեն>> /2 մասնակցություն/ և <<Ինֆորմատիկա>>/1 մասնակցություն/ առարկաներից, իսկ <<Աստղագիտություն>> առարկայից մարզային փուլին չի մասնակցել ոչ մի աշակերտ:

Մարզային փուլին ակտիվ մասնակցություն են ունեցել Վարդենիսի, Սևանի, Ճամբարակի ավագ, Գեղհովիտի N2, Ն.Գետաշենի N1, Ակունքի միջնակարգ և Սևանի N 3 հիմնական դպրոցները:

Մարզային փուլի՝ 482 մասնակցից հանրապետական փուլին երաշխավորվեց մասնակցել 71 աշակերտ: Ըստ տարածքների՝ հանրապետական փուլի մասնակիցների քանակն հետևյալն է.

Տարածքի անվանում	8-րդ դաս.	9-րդ դաս.	10-րդ դաս.	11-րդ դաս.	12-րդ դաս.	Ընդամենը
Գավառ	3	2	4	9	4	22
Սևան	0	6	2	3	1	12
Ճամբարակ	0	1	2	1	2	6
Մարտունի	1	2	5	10	2	20
Վարդենիս	0	4	5	1	1	11
Ընդամենը	**4**	**15**	**18**	**24**	**10**	**71**

Առկա իրողությունը պահանջում է դպրոցներում գործող մաթեմատիկայի և բնագիտական ուղղվածություն ունեցող արտադասարանական խմբակների և դպրոցական բաղադրիչով նախատեսված, ինչպես նաև պետական պարտադիր ժամաքանակով հատկացված դասաժամերի ուսուցման արդյուավետության ուսումնասիրություն և վերահսկողություն:

Ամփոփելով 2017-2018 ուսումնական տարվա ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մարզի աշակերտների արդյունքները՝ պարզվեց հետևյալը՝

- հանրապետական փուլին երաշխավորված 71 աշակերտից մասնակցել է՝ 68-ը, չի մասնակցել՝ 3-ը:
- մասնակցած աշակերտներից 12-ը ստացել է դիպլոմ, 8-ը՝ գովասանագիր, 2 աշակերտ արժանացել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում կայանալիք միջազգային օլիմպիադային մասնակցելու իրավունքի, իսկ <<ՆԶՊ>> առարկայից մարզի թիմը՝ հանրապետությունում զբաղեցրել է 9-11-րդ տեղերը:

2-րդ կարգի դիպլոմ են շահել՝

- Վաղաշենի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ **Սարմեն Գրիգորյանը**՝ <<Աշխարհագրություն>> առարկայից.
- Գեղհովիտի N1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Մարո Խաչատրյանը**՝ <<Պատմություն >> առարկայից.
- Գեղհովիտի N2 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի **Հեղինե Ոսկանյանը**՝ <<Պատմություն >> առարկայից.

- Զովաբերի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի **Տաթևիկ Հակոբյանը՝** <<Պատմություն>> առարկայից.
- Ներքին Գետաշենի N1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ **Պետրոս Սիրականյանը**՝ <<Գերմաներեն>> առարկայից.
- Լճաշենի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի **Նարե Խանդանյանը**՝ <<ՀԵՊ>> առարկայից:

3-րդ կարգի դիպլոմ են շահել՝

- Լճաշենի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի **Նարե Խանդանյանը**՝ <<Հայ գրականություն>> առարկայից.
- Վարդենիսի ավագ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ **Արթուր Բաղդասարյանը**՝ <<Հայ գրականություն>> առարկայից.
- Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի **Տիրուհի Հարությունյանը**՝ <<Պատմություն >> առարկայից.
- Ճամբարակի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Անի Արամյանը**՝ <<Գերմաներեն>> առարկայից.
- Լիճքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ **Արսեն Պողոսյան**՝ <<Գերմաներեն>> առարկայից
- Ճամբարակի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի **Ռոզա Արամյանը**՝ <<Գերմաներեն>> առարկայից:

Գովասանագրեր են ստացել՝

- Գավառի N 2 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի **Նարինե Մանուկյանը**՝ «Հայոց լեզու» առարկայից.
- Սևանի N 2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ **Սամվել Գրիգորյանը**՝ <<Հայ գրականություն>> առարկայից.
- Վարդենիկի կրթահամալիրի 11-րդ դասարանի աշակերտուհի **Նարինե Բաղալյան**ը՝ <<Հայ գրականություն>> առարկայից.
- Վարդենիկի կրթահամալիրի 11-րդ դասարանի աշակերտուհի **Աիդա Բաղալյանը**՝ <<Աշխարհագրություն>> առարկայից.
- Մարտունու N2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի **Էմիլյա Ժամհարյանը**՝ <<Պատմություն >> առարկայից.
- Ճամբարակի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ **Վահե Երիցյանը**՝ <<Անգլերեն>> առարկայից.
- Սևանի N 4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի **Շուշանիկ Ղալթախչյանը**՝ <<ՀԵՊ >> առարկայից.
- Գանձակի N1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի **Ջուլիա Հարությունյանը**՝ <<ՀԵՊ >> առարկայից:

Միջազգային օլիմպիադային մասնակցներ՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Արսեն Պողոսյանը և Ներքին Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի աշակերտ Պետրոս Սիրականյանը, մասնակցելով գերմաներեն լեզվի առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին, նվաճել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ֆրայբուրգ քաղաքում կայանալիք միջազգային օլիմպիադայի մասնակցության ուղեգրեր:

2018 թվականի հուլիսի 15-28-ը Ֆրայբուրգում անցկացված միջազգային օլիմպիադային Լիճքի միջնակարգ դպրոցի աշակերտ Արսեն Պողոսյանը արժանացել՝ 1-ին կարգի մրցանակի, իսկ Ներքին Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի աշակերտ Պետրոս Սիրականյանը՝ 2-րդ կարգի մրցանակի:

Վերլուծելով 2017-2018 ուստարվա առարկայական օլիմպիադայի արդյունքները՝ կարելի է այն համարել դրական:

❖ **Կազմակերպվել են դպրոցականների շախմատի 12-րդ օլիմպիադայի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը:** Կանոնակարգի համաձայն՝ մրցումները անցկացվեցին մինչև 14 տարեկան աշակերտների շրջանում: Մարզային փուլում հանդես են եկել տարածքային փուլում հաղթած Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1, Վարդենիկի Ա. Օհանյանի անվան N2, Սևանի Վ. Կարապետյանի անվան N3 և Ճամբարակի N1 հիմնական, Լճավանի միջնակարգ դպրոցների հավաքական թիմերը: Ծավալված անզիջում մրցապայքարում հաղթող ճանաչվեց Գավառի Ս.Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոցի թիմը (Գայրանյան Տիգրան, Սարգսյան Վարդան, Գայրանյան Միեր, Մանուկյան Իռեն), որը մարզը ներկայացրեց օլիմպիադայի հանրապետական փուլում:

❖ Կազմակերպվել են **ՀՀ Աժ գավաթի խաղարկության, շարադրությունների մրցույթներ, նկարչական ցուցահանդեսներ, երաժշտական փառատոներ, ազգային տոներին, հոբելյանական տարելիցներին նվիրված հանդիսություններ, ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում** կազմակերպվող միջոցառումներ, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը, ուսման որակի և արդյունավետության բարձրացմանը:

❖ Կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև հիշատակի՝ **Հայոց Մեծ եղեռնի** և 1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակի օրերին:

❖ Կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված **Մայրենի լեզվի օրվան,** Հայոց բանակի ստեղծման տարելիցին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի, ՀՀ Սահմանադրության օրվան և այլն:

❖ ՀՀ Գեղարքունիքի մարզի պետական հանրակրթական ուսումնական բոլոր հաստատություններում <<**ՀՀ առաջին հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին**>> նվիրված միջոցառումների շրջանակներում 2018 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում կազմակերպվել և անցկացվել են համադպրոցական տոնական միջոցառումներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, բաց դասեր, դասղեկի ժամեր, շարադրությունների,

նկարների, ձեռքի աշխատանքների, ասմունքի, ընթերցումների, անգիր արտասանության, ձեռագրերի մրցույթներ, պատմագեղարվեստական գրքերի նվիրումներ, փաստավավերագրական ֆիլմերի դիտումներ, կավճանկարչություններ, պատի թերթերի և վահանակների ձևավորումներ, համերգային ծրագրեր, նժդեհյան մտքերի ընթերցումներ, էքսկուրսիաներ, այցելություններ Եռաբլուր, Սարդարապատի հուշահամալիր, հուշակոթողներ և թանգարաններ: Անցկացվել են նաև շրջակա միջավայրի մաքրումներ:

❖ Մարզի բոլոր դպրոցներում <<**Մեր մեծերը**>> ծրագրի շրջանակներում 2018 թվականին կազմակերպվել և անցկացվել են մեծանուն հայորդիներ Միքայել Արամյանցին, Վահրամ Փափազյանին, Հակոբ Պարոնյանին, Զապել Եսայանին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթներ, ցուցահանդեսներ, լույս են ընծայվել պատի թերթեր և ձևավորվել վահանակներ. մասնավորապես, մարզային միջոցառումներ են կազմակերպվել Գավառի N8, Թթուջրի, Ակունքի, Վաղաշենի միջնակարգ և Սևանի N 2 հիմնական դպրոցներում:

❖ 2018 թվականին <<**Հայրենի եզերք**>> խորագրով <<Բարբառների երկխոսություն>> մարզային փառատոնին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Գավառի N 2, Գանձակի N 1, Լճաշենի, Սարուխանի N 2, Ծակքարի, Ծովազարդի միջնակարգ և Գավառի N 3, N 5, Վարդենիս N 3, Սևանի N 1, N3 հիմնական դպրոցները: Փառատոնի մարզային փուլում առաջին տեղն է գրավել Վարդենիսի N 3 հ/դ-ի խումբը /մասնակիցներ՝ Բաղդասարյան Մարիա, Սուքիասյան Վանուշ, Արզոյան Սիրվարդ, Բարսեղյան Մարի, Գևորգյան Կառլեն, Հոխանյան Սերժ/: Երկրորդ տեղն են գրավել Հայրապետյան Վիգենը /Ծակքարի մ/դ/ և Կարապետյան Համեստը/Գավառի N 2 մ/դ/, իսկ երրորդ տեղն են գրավել Սաղաթելյան Մանեն /Սևանի N3 հ/դ /, Մանուկյան Անին /Գանձակի N 1 մ/դ/ և Կոռյան Միլենան / Սարուխանի N 2 մ/դ /:

❖ <<**Ընթերցման օլիմպիադա-2018**>> մրցույթի մարզային փուլի հաղթող են ճանաչվել Հակոբյան Շահենը, Հարությունյան Գագիկը /Սևանի N 3 հ/դ/ և Կոռյան Միլենան/ Սարուխանի N 2 մ/դ/, որոնք մասնակցել և խրախուսական մրցանակի են արժանացել փառատոնի հանրապետական փուլում:

❖ **Հանրապետական ասմունքի մանկապատանեկան 11-րդ փառատոնի մարզային փուլի 11-14 տարիքային խմբի հաղթողներ** են ճանաչվել Օհանյան Լիանան /1-ին մրցանակ, Գավառի N 5 հ/դ/, Մադաթյան Արսենը /2-րդ մրցանակ, Մարտունու N 1 հ/դ/, Խաչատրյան Գոհարը /3-րդ մրցանակ, Մարտունու N 2 հ/դ/ և 15-17 տարիքային խմբի հաղթողներ են ճանաչվել Հունանյան Անժելան /1-ին մրցանակ, Կարմիրգյուղի N 2 մ/դ/, Կիրակոսյան Լևինեն /2-րդ մրցանակ, Գավառի ա/դ/, Սահակյան Սաթենիկը /3-րդ մրցանակ, Գավառի ա/դ/: Փառատոնի հանրապետական փուլում Օհանյան Լիաննան /Գավառի N 5 հ/դ/ գրավեց 1-ին պատվավոր տեղը, իսկ Հունանյան Անժելան /Կարմիրգյուղի N 2 մ/դ/՝ 2-րդ պատվավոր տեղը:

❖ 2017 թվականին <<**Էպոսասացության**>> փառատոնի մարզային փուլի հաղթողներ են ճանաչվել Սիմոնյան Արեգը, Արևշատյան Գուրգենը /Կարմիրգյուղի N2 մ/դ/, Վարդանյան Նելլին /Կարմիրգյուղի N1 մ/դ/, Հակոբյան Արմանը /Մարտունու N2 հ/դ/, Մանուկյան Անին /Գանձակի N1 մ/դ/, Խաչատրյան Մերին/ Նորատուսի N1 մ/դ/: Փառատոնի հանրապետական փուլում <<Հայտնություն>> պատվավոր անվանակարգում հաղթող ճանաչվեց Սիմոնյան Արեգը /Կարմիրգյուղի N2 մ/դ/, իսկ 3-րդ տեղը գրավեց Հակոբյան Արմանը /Մարտունու N2 հ/դ/:

❖ 2018 թվականին **<<Էպոսասացության>>** փառատոնի մարզային փուլին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Գավառի N 2, 8, Սարուխանի թիվ 2, Գանձակի N 1, Լճաշենի միջնակարգ և Գավառի N 5 հիմնական դպրոցները:

Առաջին տեղը գրավեց Սարուխանի N 2 միջնակարդգ դպրոցի աշակերտուհի Կռոյան Միլենան, երկրորդ տեղը՝ Սարուխանի N 2 միջնակարգ դպրոցի աշակերտուհի Գևորգյան Թագուհին և Մարտունու մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սան Բաղդասարյան Լուսինեն, երրորդ տեղը՝ Լճաշենի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Խանդանյան Մանեն, Գավառի N 2 միջնակարգ դպրոցի աշակերտներ Եղոյան Աննան և Մելքոնյան Նարեկը:

Հաղթողները կմասնակցեն փառատոնի հանրապետական փուլին, որը կանցկացվի 2018 թվականի հոկտեմբերի 6-ին՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի<<Պերճ Պռոշյանի տուն-թանգարանում>>:

❖ Կազմակերպվել են **բռնցքամարտի, ծանրամարտի, ձեռքի գնդակի, վոլեյբոլի, շախմատի, ֆուտբոլի** և այլ մարզաձևերից մարզային առաջնություններ, իսկ հաղթողներից շատերը հաջողությամբ են հանդես եկել նաև մրցումների հանրապետական փուլերում: ՀՀ անկախության 27-րդ տարեդարձին նվիրված ՀՀ դպրոցականների 27-րդ մարզական խաղերի եզրափակիչ փուլում Գեղարքունիքի և Գավառի Պ.Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցների վոլեյբոլի հավաքական, Ճամբարակի N1 հիմնական դպրոցի ֆուտբոլի և Գավառի մարզադպրոցի թիմերը գրավեցին 4-րդ տեղը, իսկ Գավառի N5 հիմնական և Սարուխանի Ս.Մակարյանի անվան N1 միջնակարգ դպրոցների ձեռքի գնդակի հավաքական և Գավառի Պ.Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցների թիմերը արժանացան 3-րդ մրցանակի:

❖ **ՀՀ ԱԺ գավաթի** խաղարկության եզրափակիչ փուլում մարզը կներկայացնեն մարզային փուլում հաղթած Ճամբարակի N1 (3-րդ դասարան), Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N1 (4-րդ դասարան), Մարտունու Ս.Դարբինյանի անվան N2 հիմնական (5-րդ դասարան) և Գավառի Պ.Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ (6-րդ դասարան) դպրոցների թիմերը:

❖ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող **«Սպորտլանդիա»** մարզական միջոցառման 1-ին՝ ներդպրոցական և 2-րդ՝ տարածքային փուլերը անցկացվել են մարզի 91 հանրակրթական դպրոցում, մասնակցել է 15881 աշակերտ: Մարզային փուլում՝ երկու տարիքային խմբերում էլ հաղթող են ճանաչվել Գավառի Պ.Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցի թիմերը և մարզը ներկայացրել միջոցառման հանրապետական փուլի մրցումներում:

❖ Անցկացվել են 2017-2018 ուստարում նախատեսված **ՀՀ դպրոցականների երրորդ ուսումնամարզական խաղերի** ՀՀ Գեղարքունիքի մարզային փուլը, որի հաղթող՝ Գավառի Պ.Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցի թիմը մարզը կներկայացնի խաղերի եզրափակիչ փուլի մրցումներում:

❖ Մարզական տարբեր մրցումներին ու միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ունեցել Գավառի N2, N8, Սարուխանի N1, Գեղարքունիքի, Սևանի N6, Վահանի, Թթուջրի, Լճաշենի, Կարճաղբյուրի, Լուսակունքի, Գեղհովիտի N2, Զոլաքարի N 1, N 2 միջնակարգ և Սևանի N1, N3, Գավառի N1, N5, Մարտունու N1, N2, Վարդենիկի N1, Վարդենիսի N2, Ճամբարակի N1 հիմնական դպրոցների հավաքական թիմերը:

❖ Հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի իրականացման շրջանակներում մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների ուսման և դաստիարակության աշխատանքների կազմակերպման համատեքստում հետևողականորեն իրականացվել են **անչափահասների շրջանում հանցագործությունների կանխարգելմանը նպատակաուղղված բազմաթիվ և տարաբնույթ միջոցառումներ՝** ապահովելով համագործակցություն՝ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, համայնքների ղեկավարների, ուսումնական հաստատությունների տնօրենների ու մանկավարժների, ծնողների, իրավապահ մարմինների, երիտասարդական միջոցառումների կազմակերպման մարզային կենտրոնի աշխատանքներում:

❖ Մարզում անչափահասների կողմից կատարված իրավախախտումների վերացման նպատակով հանրակրթական հաստատություններում, ըստ միջոցառումների ծրագրի, դասղեկի ժամերի, դասարանական և ծնողական ժողովների, աշակերտական ինքնակառավարման մարմինների միջոցառումների, թեմատիկ ցերեկույթների, հանդիսությունների միջոցով քննարկվել են հասարակության համար վտանգավոր, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը ոտնահարող երևույթների անընդունելիությունը և այն դրականը, որն ապահովում է հասարակության առաջընթացը:

❖ Որոշակի աշխատանքներ են իրականացվել մարզի ուսումնական հաստատություններում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման ուղղությամբ: Ապահովվել է ՀՀ հանրակրթական ավագ դպրոցների աշակերտների մասնակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ռազմամասնագիտական կողմնորոշման վերաբերյալ հանդիպմանը:

❖ Կազմակերպվել են <<**Դիպուկ հրաձիգ**>> մրցույթի ներդպրոցական և տարածքային փուլերը: Մարզային փուլի մրցումները կանցկացվեն սեպտեմբեր ամսին: <<Կորյուն>> ռազմամարզական խաղերի մարզային փուլի հաղթող՝ Ճամբարակի ավագ դպրոցի թիմը հանրապետական փուլի մրցումներում գրավել է 4-րդ տեղը:

❖ 2016-2017 ուստարում անցկացված **նախազորակոչայի**ն և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի հանրապետական փուլում Ճամբարակի ավագ դպրոցի թիմը գրավել է 3-րդ տեղը, իսկ 2017-2018 ուստարում՝ ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերի մրցումները տեղի կունենա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

❖ Իրականացվել **է ՆԶՊ կաբինետների**, զենքի և զինամթերքի նպատակային օգտագործման և պահպանության մշտադիտարկում: Ներկայումս 107 դպրոց ունի ուսումնական զենք, իսկ մոտակա տարիներին, սահմանված պահանջներին համապատասխան, ուսումնական զենք և զինամթերք ստանալու հնարավորություն չունի մարզի 8 դպրոց (Ջաղացաձոր, Կուտական, Ծափաթաղ միջնակարգ, Սեմյոնովկա, Լեռնահովիտ, Գեղաքար, Գեղամաբակ, Ավազանի հիմնական): Նոր ուսումնական տարում ևս աշխատանք է տարվելու ՆԶՊ առարկայի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, դպրոց-բանակ կապը ամրապնդելու և ռազմահայրենասիրական միջոցառումները պարբերաբար կազմակերպելու ուղղությամբ:

❖ 2010 թվականից **ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի** կողմից Ռուսաստանի Դաշնության ֆինանսավորմամբ և ՀՀ կառավարության մասնակցությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի 113 դպրոցում իրականացվում է <<Դպրոցական սնունդ>> ծրագիրը, որտեղ ընդգրկված է

մարզային ենթակայության 111 և ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության 2 դպրոց (Ծաղկունքի բաց դպրոց և Վարդենիկի կրթահամալիր):

Ծրագրում ընդգրկված է շուրջ 12050 երեխա, այդ թվում՝ 1589-ը նախակրթարանների սան:

Չեն ընդգրկվել ավագ դպրոցները և Գավառի N7, Սարուխանի N2 միջնակարգ, Սևանի N2, Գեղամաբակի, Գեղաքարի և Ավազանի հիմնական դպրոցները:

Կարևորելով 5-6 տարեկան երեխաների՝ դպրոցին նախապատրաստելու հարցը որպես հանրակրթության որակի ապահովման գործոններից մեկը՝ անհրաժեշտ աշխատանք է կատարվել մարզում նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ու ծրագրերի մշակման ուղղությամբ:

❖ **2018 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի 57 համայնքներից 28-ում գործում է 44 մանկապարտեզ,** որտեղ հաճախում է 3608 երեխա: Աշխատողների ընդհանուր թիվը՝ 677, որից՝ մանկավարժ՝ 272:

Մարզի 44 մանկապարտեզից 16-ը քաղաքային են, 28-ը՝ գյուղական, 27-ը գործում են շուրջտարի, 17-ը՝ սեզոնային: Մարզում նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում կազմում է 23,9%:

Մարզի 33 բնակավայրում նախադպրոցական կրթություն չի իրականացվել՝ մանկապարտեզ չլինելու պատճառով, իսկ 6 համայնքում /Վարսեր, Արծվանիստ, Զոլաքար, Թթուջուր, Վաղաշեն, Ծաղկունք/ մանկապարտեզ կա, բայց չի գործում: Առաջիկայում կգործեն Ն. Գետաշենի և Գեղամավանի մանկապարտեզները /2018թ սեպտեմբեր/:

57 համայնքներից 11-ում նախադպրոցական կրթություն չի իրականացվում (Բերդկունք, Ծաղկունք, Նորաշեն, Սեմյոնովկա, Զոլաքար, Ախպրաձոր, Գեղաքար, Մաքենիս, Վանևան, Տորֆավան, Լճավան):

2017 թվականին մանկապարտեզներ են բացվել Դդմաշեն, Չկալովկա, Գեղամասար (Սոթք և Տրետուք բնակավայրեր), Ճամբարարակ (Մարտունի բնակավայր) համայնքներում:

2017-2018 ուստարում մարզի ևս 6 ուսումնական հաստատությունում բացվել է նախակրթարան, որից 3-ը՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ (Հայրավանքի, Ակունքի, Մարտունու N 1), 3-ը՝ << Փրկենք երեխաներին >> կազմակերպության կողմից (Գեղարքունիքի, Վարսերի, Վաղաշենի միջնակարգ դպրոցներ):

2017-2018 ուստարվա ընթացքում լիցենզավորվել են 41 դպրոցահեն նախակրթարան և 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Նշված գործընթացը ներկայումս կրում է շարունակական բնույթ:

Նախադպրոցական ցանցի ընդլայնման նպատակով 2011-2017թթ. մարզի 45 բնակավայրում բացվել է 52 նախակրթարան, **որից՝**

- 41-ը՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ.
- 11-ը՝<<Փրկենք երեխաներին>> կազմակերպության աջակցությամբ:

Նախակրթարանները (1589 երեխա) գործում են՝

- 37-ը՝ հանրակրթական դպրոցներում (1035 երեխա).
- 14-ը՝ մանկապարտեզներում (539 երեխա).

- 1-ը՝ գյուղապետարանում (15 երեխա):

2017-2018 ուստարում մարզի 57 համայնքներից 38-ում գործում է 58 /1618 երեխա/ նախակրթարան, որից 43-ը /1199 երեխա/՝ հանրակրթական դպրոցներում, 14-ը /419 երեխա/՝ մանկապարտեզներում և 1-ը գյուղապետարանում / 15 երեխա /:

❖ **Վարչությունն իր աշխատանքները** կազմակերպել է՝ համագործակցելով մարզպետարանի ու ՀՀ ԿԳՆ կառուցվածքային տարբեր ստորաբաժանումների, համայնքների ղեկավարների, հումանիտար և հասարակական կազմակերպությունների աշխատակիցների հետ:

Թեև մշտապես եղել է հետևողականություն աշխատանքների կազմակերպման և առաջընթացի գրանցման ուղղությամբ, այնուամենայնիվ, կան որոշակի խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես՝

- լաբորատոր սարքավորումներով ու նյութերով ապահովումը (ապահովված է միայն 11 դպրոց).
- ջեռուցման լոկալ համակարգով ապահովումը (ապահովված է միայն 70 դպրոց).
- համակարգչային ժամանակակից տեխնիկայով և սարքավորումներով, աշակերտական սեղան-նստարաններով և ուսուցչական-աթոռներով, սպորտային գույքով համալրումը.
- հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում ուսուցչի թափուր տեղերը զբաղեցնելու համար մասնագետների պահանջի բավարարումը (53 դպրոցում՝ 64 ուսուցչի թափուր տեղ).
- նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման անհրաժեշտությունը.
- խորհուրդների անդամների համար վերապատրաստման դասընթացների անհրաժեշտությունը: